Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Նալբանդյան 5, գրասենյակ 25
Հեռ.՝ +374 93 515 600, 091 374320 **Էլ. հասցե՝** Ldpf.foundation@gmail.com
Կայք՝ www.ldpf.am

Տեղեկատվության հարցում

Հարգելի պարոն/տիկին,

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի կարգավորումներով՝ սույն հարցմանն ի պատասխան խնդրում եմ ստույգ պատասխանել յուրաքանչյուր հետևյալ հարցադրմանը՝ վերաբերող մարզպետարանի կողմից դրամական տեսքով անհատական սոցիալական աջակցությանը ձեր մարզում.

1. Արդյո՞ք **մինչև 2024թ. նոյեմբերի 14-ը** (մինչև «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի ուժի մեջ մտնելը) մարզպետարանի կողմից բնակիչներին տրամադրվել է դրամական տեսքով անհատական սոցիալական աջակցություն։
   a. Արդյոք դրա համար իրավական հիմք է ծառայել 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը.
   b. Ինչ չափանիշներ են գործել դրամական սոցիալական աջակցության շահառուների ընտրության հարցում (խնդրում ենք տրամադրել իրավական ակտի հղումը)
2. Արդյո՞ք **2024թ. նոյեմբերի 14-ից հետո** («Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո) մարզպետարանի կողմից բնակիչներին տրամադրվել/տրամադրվում է դրամական տեսքով անհատական սոցիալական աջակցություն։
   a. Արդյոք դրա համար իրավական հիմք է ծառայել/ծառայում 2024 թվականի նոյեմբերի 13-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը.
   b. Ինչ չափանիշներ են գործել/գործում դրամական սոցիալական աջակցության շահառուների ընտրության հարցում (խնդրում ենք տրամադրել իրավական ակտի հղումը)
3. 2021, 2022, 2023, 2024 և 2025 թվականներին, յուրաքանչյուր նշված տարի քանի՞ անձ/ընտանիք է դիմել մարզպետարան դրամական տեսքով անհատական սոցիալական աջակցություն/օգնություն ստանալու համար,

a. Նշված դիմումներից քանի՞սն են բավարարվել յուրաքանչյուր տարվա կտրվածքով:

4. 2021, 2022, 2023, 2024 և 2025 թվականներին, յուրաքանչյուր նշված տարի քանի՞ անձի/ընտանիքի է տրամադրվել դրամական տեսքով անհատական սոցիալական աջակցություն/օգնություն մարզպետարանի կողմից հայտնաբերած դեպքերում, սեփական նախաձեռնությամբ:

5. 2021, 2022, 2023, 2024 և 2025 թվականներին, յուրաքանչյուր նշված տարի որքա՞ն համախառն գումար է հատկացվել մարզպետարանի դրամական միջոցների հաշվին բնակիչներին դրամական տեսքով անհատական սոցիալական աջակցություն/օգնություն տրամադրելու նպատակով:

6. Արդյո՞ք գործել/գործում է մարզպետարանի կողմից դրամական տեսքով անհատական սոցիալական աջակցության/օգնության համար տարեկան նախատեսված գումարի չափը որոշելու որևէ բանաձև:

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի տնօրեն՝
Գենյա Պետրոսյան